Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 31

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Ա. Շմավոնյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 196-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Տեղական վճար սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

7. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

8. Մանկապարտեզի մուտքավճարի մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ափոմյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արուճ և Բազմաղբյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Ոռոգման նպատակով ջրավազանի կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային և պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 196-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>

օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 196-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2023թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	3519644.8	2320659.1	5840303.9
Ծախսային մաս	3532000.1	2721151.4	6253151.5
Դեֆիցիտ	-12355.3	- 400492.3	- 412847.6
Պահուստային ֆոնդ	610000.0	0	610000.0

Միաժամանակ համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2023թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներն ամբողջությամբ ուղղել ֆոնդային բյուջե՝ 04-5-1 բնագավառում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	2558895.6	1355206.6	3914102.2
Ծախսային մաս	1905582.1	2070385.4	3975967.5

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Տեղական վճար սահմանելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ենթակայությամբ <<Աշտարակի մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ի թատերական խմբակի երեխաների թիվը սահմանել 25 երեխա:

Թատերական խմբակի ամսական վարձավճարը սահմանել 7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ: Թատերական խմբակում սահմանել մինչև 5 անվճար տեղեր՝ համայնքի ղեկավարի սահմանած կարգով:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի

մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակի համայնքապետարանի կողմից ձեռք բերված գույքերն անհատույց օգտագործման տրամադրել <<Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելված 1-ի:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ն. Անդրեասյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Մանկապարտեզի մուտքավճարի մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների մանկապարտեզ ընդունվող երեխաներից մանկապարտեզի մուտքավճարի համար սահմանել 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ արտոնություն:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող բազմաֆունկցիոնալ մինիամբարձիչն (մոդել՝ SWL3220, VIN: SWL322000332) անհատույց օգտագործման իրավունքով Աշտարակ համայնքի <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18–ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 10 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արուճ և Բազմաղբյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 08.05.2023թ. N 2/փ-117 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները: Նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում և Աշտարակ համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

18–ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Ոռոգման նպատակով ջրավազանի կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Հայկ Աթոյանի 06.09.2023թ. N 8990՝ ջրավազանի կառուցման հայտը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0114-0093 ծածկագրով, Հայկ Հրաչիկի Աթոյանին սեփականության իրավունքով պատկանող 4,4195հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,1հա արոտավայրի նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության /ոռոգման նպատակով ջրավազանի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18–ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային և պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18–ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցների համարակալման մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով,

1. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի կենտրոնից սկիզբ առնող փողոցին տալ 39 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 39-րդ փողոց:

2. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի կենտրոնից սկիզբ առնող փողոցին տալ 40 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 40-րդ փողոց:

3. Նոր Երզնկա բնակավայրի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

18–ԿՈՂՄ, 1-ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի նոյեմբերի 10-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

18–ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի հոկտեմբերի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ